ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Պատվիրատուն՝ ՀՀ մշակույթի նախարարությունը, ստորև ներկայացնում է իր կարիքների համար հրատարակման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված **ՀՀՄՆ-ՄԱԱՇՁԲ-17/18** ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում **2017 թվականի հոկտեմբերի 5-ին** կնքված N **«ՀՀՄՆ-ՄԱԱՇՁԲ-17/18»** ծածկագրով պայմանագրում **2018 թվականի օգոստոսի 30-ին** կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N 1: Գրքի հրատարակման աշխատանքների լրացուցիչ շտկումներով պայմանավորված՝ Կատարողի կողմից առաջարկվել է երկարաձգել պայմանագրով նախատեսված հրատարակման աշխատանքների կատարման ժամկետը:

Փոփոխության նկարագրություն: Պայմանագրի N 1 «Աշխատանքի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց» հավելվածով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետի երկարաձգում մինչև 2018 թ-ի սեպտեմբերի 30-ը:

Փոփոխության հիմնավորում: ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 56-րդ կետի 4-րդ ենթակետ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Նանե Կարապետյանին:

Հեռախոս՝ 011 58-51-78:

Էլ. փոստ՝ cultproject@mail.ru:

Պատվիրատու՝ ՀՀ մշակույթի նախարարություն

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ N «ՀՀՄՆ-ՄԱԱՇՁԲ-17/18» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «30» 08 2018թ.

Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարությունը, ի դեմս նախարարության կանոնադրության հիման վրա գործող գլխավոր քարտուղար Ս. Մուրադյանի, (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Արտասահմանյան երկրների հետ մշակութային համագործակցության հայկական հասարակական կազմակերպությունը» ի դեմս կազմակերպության կանոնադրության հիման վրա գործող պատասխանատու քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատար՝ Ի. Շահնազարյանի (այսուհետև՝ Կատարող) մյուս կողմից, (երկուսը միասին այսուհետ «Կողմեր»), կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1. Հիմք ընդունելով կողմերի միջև 2017 թվականի հոտկտեմբերի 5-ին կնքված պետության կարիքների համար հրատարակման աշխատանքների կատարման պետական գնման **N «ՀՀՄՆ-ՄԱԱՇՁԲ-17/18»** պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.3 և 7.4-րդ կետերը և առաջնորդվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 56-րդ կետի 4-րդ ենթակետով՝ Պատվիրատուն և Կատարողը համաձայնության են եկել Պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունը.

1.1.1. Պայմանագրի N 1՝ «Աշխատանքի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց» հավելվածում «Գրական տապան 2016» գրքի հրատարակման աշխատանքների կատարման ժամկետի ավարտը՝ **«01» սեպտեմբեր, 2018 թ.»** բառերը փոխարինել **«30» սեպտեմբեր, 2018 թ.»** բառերով:

2. Համաձայնագրի գործողության ժամկետը

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից ստորագրվելու պահից և գործում է մինչև Պայմանագրով սահմանված երկու Կողմերի պարտավորությունները լրիվ ծավալով ու պատշաճ կատարելու ավարտի ժամկետը:

2.2. Կողմերի միջև ձեռք բերված սույն համաձայնագրին հակասող բոլոր նախկին պայմանավորվածությունները դադարում են գործել սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից:

3. Այլ պայմաններ

3.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

3.2. Կողմերի պատասխանատվությունը որոշվում է Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրությանը համապատասխան:

3.3. Սույն համաձայնագիրը կազմված է 2 (երկու) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ մշակույթի նախարարություն Հասցեն՝ 0010, ք. Երևան, Վազգեն Սարգսյան փող. 3 Կառավարական տուն 2, հեռ. ՝ 58-51-96, 58-51-78 ՀՎՀՀ02508054, h/h 900011012862 ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչությունում	«Արտասահմանյան երկրների հետ մշակութային համագործակցության հայկական հասարակական կազմակերպություն» Հասցեն՝ ք. Երևան, 0002,Արամի 82-84 ՀՎՀՀ 02504122, h/h 220483350074000 ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ Ագրիկոլ ԲԱՆԿ ՓԲԸ
---------- Ս. Մուրադյան (ստորագրություն)	---------- Ի. Շահնազարյան (ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.